ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

- Վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ
- Օրը՝ 13.12.2018թ.
- Ժամը՝ 11:00

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի և դրանցում առկա անհամապատասխանությունների մասին

(Մ. Թումանյան)

1. Ընդունել ի գիտություն որ,

1.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է իրենց որակավորումը հավաստող հրավերով պահանջվող փաստաթղթերը,

1.2 Որոշ մասնակիցների կողմից ներկայացված հատերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- **«Ֆոտոն» ՍՊԸ**- ներկայացված հավելված 3-ում լրացված չէ ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: Էլեկտրոնային կայքով ուղարկված բոլոր փաստաթղթերն անհրաժեշտ է կցել նաև աճուրդ համակարգում /հնարավոր թույլատրելի ծավալի սահմաններում/: **115-րդ** չափաբաժնի մասով ներկայացված տրանսպորտային միջոցներից միայն 365 AI 61 և 070 AL 61 պետհամարանիշների տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերը և սեփականատիրոջ հետ կնքած պայմանագրերն են գտնվում ժամկետում, մնացած բոլոր տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերը և սեփականատիրոջ հետ կնքած պայմանագրերի ժամկետները չեն համապատասխանում մատակարարվելիք ապրանքների մատակարաման ժամկետներին: Բացակայում է 2-րդ նմանատիպ պայմանագրի պատճենը:
- **«Ցիկլոիդ» ՍՊԸ**- ներկայացված հավելված 3-ում լրացված չէ ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: ՇՀԱՊՁԲ-11/2-ՀՀԿԱՈՊՊԳՎ-15/1-1 ծածկագրով պայմանագրի հաշիվ-ապրանքագրերը բացակայում են, կցված ֆայլը չի բացվել: **7-րդ** չափաբաժնի մասով համակարգում լրացված տեխնիկական բնութագիրը կրկնակի է, անհրաժեշտ է համապատասխանեցնել հրավերի պահանջներին: Բացակայում են 97-րդ չափաբաժնի մասով մատակարարի կողմից մատակարարվելիք ապրանքների մասով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունում գրանցված սպանդանոցի հետ ունեցած պայմանագիր պատճենը, ինչպես նաև ներկայացված չէ հրավերով պահանջվող առնվազն 12 տրանսպորտային միջոցի տվյալները և սեփականությունը հավաստող փաստաթղթերը, իսկ ներկայացված տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերը կամ անընթեռնելի են կամ ժամկետանց: Բացակայում են 73-76, 117-120-րդ չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխանող տրանսպորտային միջոցի տվյալները: Հրավերով պահանջվող տրանսպորտային միջոցի տվյալները անհրաժեշտ է ներկայացնել հրավերի 2-րդ բաժնում նշված աղյուսակի տեսքով:
- **«Գալիմա» ՍՊԸ- 44-րդ, 83-րդ, 109-րդ, 111-րդ, 112-րդ** չափաբաժինների մասով ներկայացված բնութագիրը թերի են, հաշվի առնելով, որ ընթացակարգի պայմանագիրը ավտոմատ եղանակով կազմվում է համակարգի կողմից և պայմանագրում հնարավոր չէ լրացնել այլ պայմաններ՝ նպատակահարմար է այդ պայմանները ներառել բնութագրում:
- **«Սևանի հացի գործարան» ՓԲԸ**- ներկայացված հայտում բացակայում են ներկայացված բոլոր տրանսպորտային միջոցների տեխնիկական անձնագրերը:
Հրավերով պահանջվող տրանսպորտային միջոցի տվյալները անհրաժեշտ է ներկայացնել հրավերի 2-րդ բաժնում նշված աղյուսակի տեսքով:
- **«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ**- Էլեկտրոնային կայքով ուղարկված բոլոր փաստաթղթերն անհրաժեշտ է կցել նաև աճուրդ համակարգում /հնարավոր թույլատրելի ծավալի սահմաններում/:
- **«Սավա» ՍՊԸ**- ներկայացված չէ նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև նմանատիպ պայմանագրով չի ապահովում ներկայացված գնային առաջարկի 50 տոկոսը: Ներկայացված բնութագիրը թերի են, հաշվի առնելով, որ ընթացակարգի

պայմանագիրը ավտոմատ եղանակով կազմվում է համակարգի կողմից և պայմանագրում հնարավոր չէ լրացնել այլ պայմաններ՝ նպատակահարմար է այդ պայմանները ներառել բնութագրում:

-«ԲԻԳ ԼԱՅՖ» ՍՊԸ- Էլեկտրոնային կայքով ուղարկված բոլոր փաստաթղթերն անհրաժեշտ է կցել նաև աճուրդ համակարգում /հնարավոր թույլատրելի ծավալի սահմաններում/:

-«Լեբերոն» ՍՊԸ- ներկայացված հավելված 3-ում լրացված չէ ապրանքային նշան և արտադրողի անվանում սյունակները, գյուղմթերքի դեպքում լրացնել գյուղմթերք: Էլեկտրոնային կայքով ուղարկված բոլոր փաստաթղթերն անհրաժեշտ է կցել նաև աճուրդ համակարգում /հնարավոր թույլատրելի ծավալի սահմաններում/: **25-րդ** չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ չի համապատասխանում հրավերի պահանջներին, ներկայացված է այլ ապրանքի բնութագիր, բացակայում է **60-րդ** չափաբաժնի համար հրավերով պահանջվող տրանսպորտային միջոցների տվյալները: ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով պայմանագրի գինը և ներկայացված հաշիվ ապրանքագրերի ընդհանուր գինը չի համապատասխանում, **96-րդ** չափաբաժնի մասով ըստ հրավերի պահանջվում է առնավազն 14 տրանսպորտային միջոց, ներկայացված է միայն 9 տրանսպորտային միջոցների ամբողջական տվյալները, **98-րդ** չափաբաժնի մասով ըստ հրավերի պահանջվում է առնավազն 12 տրանսպորտային միջոց, ներկայացված է միայն 9 տրանսպորտային միջոցների ամբողջական տվյալները, բացակայում է հայտով ներկայացված աղյուսակում նշված 15 տրանսպորտային միջոցներից 6-ի տվյալները:

1.3 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օր/ 1.2 կետում նշված անհամապատասխանություններն ուղղելու դեպքում ներկայացված հայտերը կգնահատվել բավարար, հակառակ դեպքում կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի թիվ 4 արձանագրությունում առկա տեխնիկական վրիպակի ուղղման մասին

(Մ. Թումանյան)

Հաշվի առնելով, որ ընթացակարգի թիվ 4 արձանագրությունում առկա է եղել տեխնիկական վրիպակ՝ հանձնաժողովը որոշեց թիվ 4 արձանագրությունում տալ տխնիկական վրիպակի ուղղում, մասնավորապես.

Նկատի ունենալով, որ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների ցուցակում 81-րդ և 82-րդ չափաբաժիններում նշված է «Լեբերոն» ՍՊԸ-ի նախնական գնային առաջարկը, վերջնական գնային առաջարկի փոխարեն, ուստի անհրաժեշտ է 81-րդ չափաբաժնում նշված «213,516.000» թվի փոխարեն կարդալ «210,786,000», 82-րդ չափաբաժնում նշված «148,659,525» թվի փոխարեն կարդալ «142,266,000»:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	*Մ. Թումանյան*	
Հանձնաժողովի անդամներ՝	*Լ.Հարությունյան*	
	Ա.Բաղդասարովա	
	Ք.Վարդանյան	
	Ն.Եղոյան	
Հանձնաժողովի քարտուղար՝	*Ա. Համբարձումյան*	